

ԿՈՂԱՐԱՅ ԱՂԱՀԱՆՔՆ


Ապա վեր ելնելով լերան գագաթը, սխրացեալ կը դիտէինք Կողբայ բնական և գեղեցիկ տեսքը: Ամբողջ փոքրիկ աւանն՝ տարածուած ճեպընթաց լեռնահոս գետակին ափանց վրայ՝ թաղուած կ'երևէր պարտիզաց կանանչութեան մէջ, որք քաղքէն դուրս խառնուելով մարգագ և ոռոգեալ դաշտորէից հետ՝ իրենց ընդարձակածաւալ կանանչութեամբ կը կազմէին սխրալի հակապատկեր մի կարմրագորշ կաւային և կրախառն զառիվայր տեղեաց հետ: Սոյն գեղեցիկ գոյնս, որ հազիւ երբէք մի քանի գիւղական կենաց պատկերներու մէջ կը գտնուի՝ և որոց վրայ կը զմայլիմք, իսկ աստ մայր բնութիւնն իւր ճարտար վրձնողին հրաշալի կերպով յարմարեր էր՝ առջնիս տարածուած կենդանինկարին մէջ, որ մերթ 'ի շունչ մեղմիկ զեփիւռի իբրև ծով մի կը տատանէր, և մերթ հազարաւոր ծաղկանց գեղեցիկ խառնուածով կը սխրացնէր զգիտողս: Ահա երկինքն կապոյտ ներկուած, և երկիրս ծածկուած կանաչագեղ պարտիզօք և դալարեօք, անդին՝ թաքեալդու բարձր կոնն՝ իւր սև և սրածայր գագաթովն, սորա ամէնքն այլ՝ իրենց նորօրինակ և բնական գեղեցկութեամբ կը հիացնէին զմեզ, իցիւ թէ նկարել գիտնայի, անշուշտ կը զոհէի ամբողջ օրս, և եթէ հարկ լինէր՝ շաբաթ մ'այլ՝ սոյնպիսի կախարդիչ յիշատակարանով մի՝ ի դարձին սենեկիս որմը պնծելու համար:

Մեզմէ սակաւ մի գէպի ալ կը գտնուէր բիւրեղացեալ գածի շեղջըն, որ իւր թափանցկութեամբ ապակիէն չէր զանաղաներ, իսկ 'ի ձախակողմն՝ 1888 տարւոյն աղի աշխատութեան տեղն էր: Ազատիրոջ ամէն մի խորանարդ սառնէն՝ աղ ծախելուն, իւրաքանչիւր երկրտեղ վրայ՝ 2 ու կէս կոպէկ կը հատուցուի: Գնած աղերնին կը դնեն բեռնակիր կենդանեաց վրայ, և այսպէս կը տանին քանի մի հարիւր մղոն տարածութեամբ գտնուած շրջակայ տեղերը: Յիրաւի մէկն որ քաղաքականացեալ աշխարհի մէջ մեծցած ապրած ըլլայ, ուր ամենայն ինչ դիւրացուցեր պարզեր են, ոգեսպառ կը լինի տեսնելով տեղւոյս տաժանելի և սակաւարդիւն աշխատութիւնը: Ահա մի քանի Գիւրդեր, հոգինին բերաննին եկած և արիւն քրտինք մտած, կը բերեն մի քանի աղի հատորներ, 6—7 երկլիտր ծանրութեամբ, և առանց ամենեին ծածկելու զայն կամ պատատելու. այլ միայն շուաններով կապկրպելով կ'առնուն կենդանւոյն վրայ կը դնեն, և այսպէս զանաղաքայլ կ'երթան հեռաւոր տեղեր: Երբեմն կը գործածեն նաև ուլտեր և սայլեր (Фурьюн). բայց յետինքս տեղւոյս ճանապարհաց համար անյաբմար են և շարունակ ցեխերու և

1. Երկայնութեամ չափ մ'է, որ կը Ռաւասարի երեք ուլասակամ մեզրից:

տղմերու մէջ կը խրին : Թայանի է որ Պաքուի մէջ երկաթուղի դնելով երբ անդրակասպիական աղն սկսաւ դիւրութեամբ այս կողմերս գալ, այն ատեն Կողբայ աղն բոլորովին երեսէ ձգուեցաւ, փոխադրութեան միջոցներն պակաս լինելով և զայն տարածելն անտանելի :

« Երանի թէ հոս երկաթուղի մի լինէր և կամ գէթ հարթ և լայն ճանապարհ մի, անշուշտ պիտի կարենայինք բոլոր Անդրակովկասու աղ մատակարարել », ըսաւ Վեգիրովն : « Իսկ հիմակ ինչպէս գործը առաջ տանինք, երբ չունինք ոչ հեռագիր և ոչ յղթատարական հաղորդութիւն, վասն զի ամենահարկաւոր թղթերնիս ալ հազիւ եօթն



օրուան մէջ Տփղիս կը հասնի. և կրնաք երեսկայել թէ այսպիսի հեռաւորութիւն մը սրլափ ժամանակ կ'ուզէ հետիոտտ անցնելու կտրելու համար » :

Շատ իրաւացի էին նորա ըրած խորհրդածութիւնքն. վասն զի թէպէտ տեղոյս աղն անհամեմատ կերպով շատ է, սակայն ճանապարհին հեռաւորութեան և դժուարութեանց պատճառաւ՝ անկէց եկած շահն ամենասակաւ է :

Անգամ մը ձայն կ'ելլայ, չեմ գիտեր ինչ կերպով, թէ Կողբայ մէջ աղ չկայ : Կը գումարուի յանձնաժողով մի, կ'որոշեն լաւ վարձք և ոռճիկ, և կը սկսին հնարք մի մտածել որ կարենան շահաւոր ընել այն բազմագանձ լեռը : Վերջապէս կ'որոշեն քննել և զննել զտեղին : Հոն երթալով և շատ մի հաւաստի դիտողութիւններ ընելով կը փա-

րատեն ամէն աւելորդ վախ ու կասկած։ Ներկայ բրածոյից տարածութիւնն 10 քառակուսի վերստ է, իսկ տեսանելի աղին թանձրութիւնն 60 սաժէն, այնպէս որ ընդ ամէնն կ'ըլլայ 125,000,000 խորանարդ սաժէն աղ, որ կ'ընէ 125 միլիարդ երկկիտր։ Ըստ այսմ եթէ ամբողջ Ռուսաստան իւր 100 միլիոն բնակչօք միայն առձեռն պատրաստ աղէս գործածէր, իւրաքանչիւր մարդուն՝ 5 հազար տարուան միջոց՝ ամէն տարի 10 ֆունտ աղ պիտի խոնար։

Տեղւոյս աղն իւր յատկութիւններով կրնայ մրցիլ ամենէն աւելի ազնուագոյն տեսակ աղերուն հետ, որք ուրիշ տեղեր կը գտնուին։ Հոս ասոր բերեղացեալ կտորներէն կը շինեն շատ գեղեցիկ առարկաներ, ինչպէս՝ համրիչ, ծանրոց թղթերու (presse-papiers), սեղանի վերաբերեալ ձեռակերտներ, փոքրիկ խաչեր, և այլն։ Երբեմն նաև ամբողջ սեղաններ ևս կը շինեն, բոլորովին թափանցիկ և յստակ բիւրեղի նման։ և քանի մի յանդուգն կողբացիք՝ աղի մեծամեծ հատորներով իրենց համար ամբողջ տուններ ևս շինեցին։ այլ թէ որքան կը տեսն այս տուններս՝ աշնանային յորդ և ստէպ անձրևաց ներքի, և թէ որքան աշխատութեանց պատճառ կ'ըլլան, մեզմէ աւելի գիտեն զայն 'ի փորձոյ անոնց բնակիչներն։

Տեղւոյս բնակիչք իրենց պէտք եղած աղն ձրի կ'ընդունին։ և այս բանս անոր համար է որ ժողովուրդն չտրտնայ՝ արգիլուած ըլլալով ազատօրէն առնուլ անկէց գործածել, իրաւցնէ այսպիսի հրաման մի բոլորովին աննպատակ պիտի ըլլար, ինչպէս ըսել թէ մաքուր օղն մի շնչէք և աղբեր ջուրն մի խմէք։

Երբ տուն դարձանք՝ կերակուրի նստեցանք. և առակին ըսածին պէս, թէ «ինչ որ շատ կայ՝ այն իսպառ չկայ», բոլոր սեղանին վրայ եղած կերակուրներն անլի էին։ յետոյ կնքեցինք օրերնիս՝ ուղտերով մի քանի շրջան ընելով։

